



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
 ՈՐՈՇՈՒՄ**



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 5
 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը, լսելով ռազմաբժշկական ֆակուլտետի պետ Վ.Ծատուրյանի, հետբուժական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ավետիսյանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Ռազմաբժշկական ֆակուլտետի 5-րդ կուրսի կուրսանտ սերժանտ Նիկոլայ Ալբերտի Գրիգորյանի թեկնածությունը՝ «Մերուժան Ստեփանյանի» անվան կրթաթոշակ շնորհելու վերաբերյալ (կցվում է) (21-05-05-01).
2. Հաստատել «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսումնական գործընթացի ողջ ժամանակահատվածում սովորողներին էլեկտրոնային փոստի հասցե տրամադրելու, օգտագործելու և ապակտիվացնելու» կարգը (կցվում է) (21-05-05-02).
3. Հաստատել մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի կատարելագործման դասընթացների ուսումնական պլանները և ծրագրերը (կցվում է) (21-05-05-03).



4. Շրջանառել «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2021-2025 թվականների զարգացման հայեցակարգ» գիտագործնական ձեռնարկը՝ Գիտական խորհրդի անդամների և շահագրգիռ այլ ստորաբաժանումների կողմից քննարկման, կարծիքների և առաջարկությունների ներկայացման համար (կցվում է) (21-05-05-04).

5. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (կցվում է)՝

ա) Ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Նաիրա Բաբկենի Չիչոյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում (21-05-05-05).

բ) Բժշկական ֆիզիկայի ամբիոնի դասախոս Արա Կամոյի Աթայանին շնորհել դոցենտի գիտական կոչում(21-05-05-06).

գ) Բժշկական հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս Քրիստինե Սամվելի Ավետիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում(21-05-05-07).

դ) Մանկական ակնաբուժության ամբիոնի դասախոս Թամարա Ռուբենի Գևորգյանին շնորհել դոցենտի գիտական կոչում(21-05-05-08).

ե) Կլինիկական ալերգոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս Զարուհի Գևորգի Կալիկյանին շնորհել դոցենտի գիտական կոչում(21-05-05-09).

Գիտական կոչումների շնորհման սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.Գ.Ղ. ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Բ.Գ.Ղ. ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

